ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

<< 03 >> Հոկտեմբեր 2016թ. N 101

ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՈՒՄ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ ԲՆԱԳԱՎԱՌԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԵԼՈՒ, ԲԱՇԽՈՒՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2008 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 4-Ի N145 ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի առաջին մասի 1-ին կետի <<բ>> ենթակետով, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.7-րդ կետի առաջին պարբերությամբ, 1.8-րդ կետով, 1.9-րդ կետի առաջին պարբերությամբ, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 19-ի N1793-Ն որոշման 3-րդ կետի <<ա>> ենթակետով հաստատված Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի կանոնադրության 15-րդ, 16-րդ և 19-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի տարածքում կառավարության տարածքային քաղաքականության իրականացման, մարզպետի գործառույթների արդյունավետ կազմակերպումն ապահովելու նպատակով.

կարգադրում եմ՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզում կառավարության տարածքային քաղաքականության իրականացման և հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների գործունեության բաշխումն ըստ բնագավառների՝ համաձայն հավելվածի:
2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2008 թվականի նոյեմբերի 4-ի <<Մարզում կառավարության տարածքային քաղաքականության իրականացման և հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների գործունեությունը ըստ բնագավառների համակարգման և բաշխման մասին>> N145 կարգադրությունը:
3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ ***Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ***

Հավելված
Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի
2016 թվականի նոյեմբերի 3-ի
N 121 կարգադրության

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԸՍՏ ԲՆԱԳԱՎԱՌԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ԵՎ ԲԱՇԽՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ՝

Կրթության, տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով, անձնակազմի կառավարման և ներքին աուդիտի բնագավառներ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ Լ. ՄՈՒՐԱԴՅԱՆ՝

Առողջապահության և սոցիալական ապահովության, սոցիալական աջակցության, ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բնագավառներ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ Մ. ՔԱՐՏԱՇՅԱՆ՝

Քաղաքաշինության, տրանսպորտի, ճանապարհաշինության, արտակարգ իրավիճակների, քաղաքացիական պաշտպանության և զորահավաքային նախապատրաստության բնագավառներ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ Գ. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ՝

Գյուղատնտեսության և բնապահպանության, հողաշինության և հողօգտագործման, մշակույթի, սպորտի և երիտասարդության հետ տարվող աշխատանքների բնագավառներ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ Փ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ՝

Ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման, քարտուղարության, իրավաբանական բաժնի, զարգացման ծրագրերի և վերլուծության, տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի, ներքին աուդիտի և անձնակազմի կառավարման բնագավառներ:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Փ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ